

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Միջնակարգ բաժինի 7-րդ դասարան

2015 – 2016 տարեշրջան

Հայոց լեզուի դասանհիթերու բովանդակութեան պատկեր

Դասագիրք՝ «Հայրենի Աղբիւր»

Հեղինակ՝ Յ. Քիրքճեան:

Ուսուցչուհի՝ Անի Պիլալեան

<u>Բովանդակութիւն</u>	<u>Ուսուցման նպատակակէտեր</u>
1.«Աղբիւրը» Դանիել Վարուժան	-Մահմանել վայրի բնութիւնը: -Ցանկ պատրաստել վայրի բնութիւնը յատկանշող տուեալներու մասին: -Մանրամասնել նախ արտաքինը՝ գոյներ, ձայներ: Ապա անտառի ստորերկրեայ աշխարհի մասին՝ «թաքուն անձաներ»: -Գնահատել բանաստեղծութիւնը եւ եզրակացնել որ ան ուժեղ ու ազատ երեւակայութեան արդիւնք գրութիւն է: Արտասանութեան համար -Զգուշանալ «երգելէ» կամ «ճառելէ»: -Ասմունքել եռանդով: -Ուշադիր ըլլալ կէտադրութեան: -Ուշադիր նաեւ ձայնի, եղանակի գլխաւոր փոփոխութիւններուն կապուած իմաստի:

<p>2.«Թարթար»</p> <p>Բաֆֆի</p>	<p>-Ճանչնալ հայրենի բնութիւնը:</p> <p>-Կապել հայ մարդու նկարագիրը այդ բնութեան յատկանիշներուն- եւ ասոնց միջոցով գտնելու` հայու «հոգեկան աշխարհագրութիւնը»:</p> <p>-Կիրարկելով այս մօտեցումը , թափանցել Արցախի բնութեան ամենէն անառիկ անկիւնները:</p> <p>-Թելադրել որ հերոսի ընդմէջէն ընդգծեն քաջութեան եւ ինքնապաշտպանութեան գաղափարները:</p> <p>-Գնահատել բնութեան տարերային ուժերը եւ ազատութեան ու պայքարի ձգտումները:</p> <p>Որոշել որ նման բնութեան ծնունդը` նոյնինքն Արցախի բնակիչ հայ մարդն է:</p>
<p>3.«Զարնուած Որսորդը»</p> <p>Ռուբէն Զարդարեան</p>	<p>1.-Սահմանել` ժողովրդական հեքիաթը:</p> <p>2.-Խոյզ հարցում</p> <p>քարտէսի վրայ փնտռել ու գտնել Ծովքը ու անոր մասին տեղեկութիւններ որոնել:</p> <p>-Վերլուծել հեքիաթին խորքը, որ կազմուած է խոնարհ ժողովուրդի մէկ մաղթանք-երագով: Անմեղ-արդարները պաշտպանուին եւ փրկուին ու անոնց հալածիչները «զարնուին», պատժուին...</p> <p>-Կիրարկել ու յարգել` բնութիւնը անեղծ եւ մաքուր պահելու սկզբունքը:</p> <p>-Կիրարկել այն որոշումը, ըստ որուն պէտք է արգիլուին ապրող էակներու բնաջնջումը:</p> <p>-Հաշուեկշիռ պատրաստել նախագգուշական ծրագիրներու, աշխարհի ընդհանուր ապականումը կասեցնելու համար:</p>
<p>4. «Երկրագունդի Փոսին Մէջ»</p> <p>Ժիւլ Վերն</p>	<p>-Սահմանել գիտա – երեւակայական հատուածը:</p> <p>-Նշել Ժիւլ Վերնի վէպերուն ընդհանուր թեման` մարդիկ կը նուաճեն վտանգաւոր միջավայրեր:</p>

<p>5.«Իմ Մանկութեան Փողոց»</p> <p>Զապէլ Եսայեան</p>	<ul style="list-style-type: none"> -Բացատրել որ այս ճամբորդութիւնը կ'իրականանայ միայն այն ատեն երբ խիզախ ենք եւ ունինք գիտական հմտութիւն: -Պատմել դէպքը: -Ճշդել նպատակը՝ հասնիլ երկրի կեդրոնը: -Ստեղծել նոր մօտեցում, ըստ որուն երկրի կեդրոնը հալած նիւթերու դժոխք մը չէ: -Շեշտել մարդկային համայնքի՝ այսինքն ընկերութեան անհրաժշտութիւնը: -Բացատրել որ մարդս «ընկերային կենդանի» է: -Գնահատել՝ դուռ-դրացի միասին ապրելու անհրաժեշտութիւնը: -Հետեւցնել որ այդ յարաբերութիւնը կը նպաստէ անհատի աճումին: -Ծանօթանալ «կեանքը սորվելու» գաղտնիքներէն մէկուն, որն է սիրել իր թաղը: -Զգտիլ՝ անկաշկանդ, բնական կեանքի մը:
<p>6.«Բարձրացում»</p> <p>Վահան Թէքէեան</p>	<ul style="list-style-type: none"> -Ներկայացնել՝ Վահան Թէքէեան իբրեւ մարդկային արժէքներու հաւատացող անձ: -Լուսաբանել որ կեանքի արժէքը ու իմաստը կը կայանայ հոգիով ազնուանալու մէջ: -Փոխանցել այն գաղափարը, որ պէտք է ամէն անհատ հաւատայ իր կարողութիւններուն: -Հաստատել որ երբ հաւատանք մեր կարողութիւններուն, ապա անկարելին կը դառնայ կարելի: -Հաստատել մարդկային ուրիշ արժէք մը՝ ըստ որուն բարձրացողը օգնէ ուրիշներու, որպէսզի անոնք ալ իր հետ բարձրանան:

<p>7.«Երեւան – Էրեբունի»</p> <p>Պարոյր Սեւակ</p>	<p>-Խոյզ հարցում</p> <p>- Բանաստեղծութեան մէջ նշուած միւս մայրաքաղաքներուն տեղը ճշդէլ քարտէսի վրայ:</p> <p>-Ունկնդրել այս երգ-բանաստեղծութիւնը:</p> <p>-Ճանչնալ Երեւանը գեղեցիկ տեսքով, թարմ հոգիով:</p> <p>-Նոյնացնել Երեւանը հայոց բոլոր հին մայրաքաղաքներուն հետ:</p> <p>-Տեղադրել Երեւանը Արաքսի մօտ ու Մասիսի դիմաց:</p> <p>-Յիշեցնել որ Երեւանը պարտի տէր ըլլալ հայ ժողովուրդի «երագներուն»:</p>
<p>8.«Գովք Հայաստանի</p> <p>Եղիշէ Չարենց</p>	<p>-Ծանօթանալ հայեցի արժէքներու՝ մայրենի լեզու եւ արուեստ, հայրենի բնութիւն ու պատմութիւն:</p> <p>-Շեշտել կապը հայրենիքին եւ ազգային ոգիի միջեւ:</p>
<p><u>Գնահատում կատարել</u></p>	<p>Իւրաքանչիւր դասաւանդում կը նպատակադրէ հետեւեալ նպատակակէտերը.</p> <p>- Աշակերտին մօտ զարգացնել՝ սեփական խօսքի զարգացում:</p> <p>-Սեփական նախադասութիւններ կազմելու հմտութիւն:</p> <p>-Շարադրութիւն գրելու ունակութիւն:</p> <p>-Տուեալ դասի քննարկում կատարել՝ աշակերտներու մասնակցութեամբ եւ վիճարկումով:</p> <p>-Յաճախ ըստ կարելոյն մղել աշակերտը, որ ինքնարժեւորում եւ ինքնագնահատում կատարէ:</p>

Օգտագործուած
տեղեկութիւն

- Բառարան
- Պատմութիւն մը
- Առցանց «Նայիրի» բառարան
- Քարտէս
- Գծագրութիւն

Միջնակարգ բաժինի 7-րդ դասարան

2015 – 2016 տարեշրջան

Քերականության դասանիւթերու բովանդակության պատկեր

Դասագիրք՝ «Դիրին հայերէն»

Հեղինակ՝ Կարօ Առաքելեան

Ուսուցչուհի՝ Անի Պիլալեան

<u>Բովանդակութիւն</u>	<u>Ուսուցման նպատակակէտեր</u>
1.- <u>Շարահիւսութիւն</u>	-Շարահիւսել:
-Նախադասութիւն	-Սահմանել նախադասութիւնը:
-Պարզ եւ բարդ նախադասութիւններ	-Ունենալ մէկ միտք:
-Պարզ նախադասութիւններ	-Միացնել երկու պարզ նախադասութիւններ հետեւեալ բառերով՝ մինչդեռ, եւ, իսկ, որովհետեւ, որպէսզի ստանանք բարդ նախադասութիւններ:
-Բարդ նախադասութիւններ	-Գիտնալ որ պարզ համառօտ նախադասութիւնը կը կազմուի մէկ ենթակայէ եւ մէկ ստորոգիչէ:
-Պարզ համառօտ նախադասութիւն	-Գիտնալ որ մէկ ենթակայ, մէկ ստորոգիչ եւ լրացում

<p>-Պարզ ընդարձակ նախադասություն</p> <p>-Նախադասության գլխաւոր անդամները ենթակայ եւ ստորոգիչ</p> <p>-Ստորոգելի</p> <p>-Նախադասության երկրորդական անդամներ կամ լրացումներ</p> <p>-Գոյականական անդամի լրացումներ</p> <p>-Որոշիչ</p>	<p>ունեցող նախադասությունը կը կոչուի պարզ ընդարձակ նախադասություն:</p> <p>-Ենթական կը պատասխանէ ո՞վ, որո՞նք հարցումներուն</p> <p>-Ստորոգիչը կը պատասխանէ ի՞նչ կ'ընէ, ի՞նչ կ'ըլլայ, եւ այլ հարցումներու:</p> <p>-Գտնելու համար ստորոգելին էական բային կ'ուղղեմ ի՞նչպէս է, ի՞նչ է, ո՞վ է եւ այլ հարցումները:</p> <p>-Գիտնալ որ բացի ենթակայէն եւ ստորոգիչէն՝ նախադասութեան միւս անդամները կը կոչուին լրացում կամ երկրորդական անդամ:</p> <p>-Կեդրոնանալ եւ հարցումներու ճամբով ճշդել իւրաքանչիւր բառի պաշտօնը. ապա՝ զանոնք ներկայացնել գծապատկերով:</p> <p>-Ենթական եւ ստորոգիչը իրարու հաւասար են եւ կը միանան հորիզոնական գիծով, իսկ իւրաքանչիւրին լրացումները կը կապուին ուղղահայեաց գիծով՝ դէպի վար:</p> <p>-Սահմանել գոյականական անդամի նշանակութիւնը:</p> <p>-Գոյականը նախադասութեան անդամ է եւ պաշտօն ունի նախադասութեան մէջ:</p> <p>-Հետեւցնել որ գոյականի մը լրացումը կը կոչուի գոյականական անդամի լրացում:</p> <p>-Մանրամասնել գոյականական անդամի լրացումներ:</p> <p>-Որոշիչ կը կոչուի այն լրացումը, որ գոյականական անդամին որպիսութիւնը, որակը, չափը, քանակը ցոյց կու տայ:</p>
---	--

<p>-Յատկացուցիչ</p>	<p>-Ջանազանել որոշիչը որոշեալէն:</p> <p>-Նախադասութեան այն անդամը, որ որոշիչ ունի կը կոչուի որոշեալ:</p> <p>-Սահմանել յատկացուցիչը, որ գոյականական անդամին պատկանելիութիւնը ցոյց տուող լրացում է:</p>
<p>-Բացայայտիչ</p>	<p>-Ջանազանել յատկացուցիչը յատկացեալէն:</p> <p>-Ճշդել որ բացայայտիչը գոյականական անդամին ո՛վ կամ ի՛նչ ըլլալը ցոյց տուող լրացում մըն է:</p> <p>-Ջանազանել բացայայտիչը բացայայտեալէն:</p> <p>-Մորվիլ բացայայտիչին գործածութեան եղանակը նախադասութեան մէջ:</p> <p>-Ջանազանել բացայայտիչը բացայայտեալէն:</p> <p>-Սահմանել բայական անդամի նշանակութիւնը:</p>
<p>-Բայական անդամի լրացումներ</p>	<p>-Գիտնալ որ բայի մը լրացումը կը կոչուի բայական անդամի լրացում:</p> <p>-Արձանագրել բայական անդամի լրացումներու տեսակները:</p>
<p>-Խնդիրներ</p>	<p>Սահմանել որ գործողութեան կապուած առարկայ ցոյց տուող լրացումները կը կոչուին խնդիրներ:</p> <p>-Խնդիրները կը պատասխանեն որո՞ւ, ինչի՞, ի՞նչ բանէ եւ այլ հարցումներուն</p>
<p>-Ուղիղ եւ անուղղակի խնդիրներ</p> <p style="text-align: right;">Ուղիղ խնդիր</p>	<p>-Ուղիղ կը կոչուի այն խնդիրը, որուն վրայ</p>

<p>Անուղղակի խնդիր</p>	<p>անմիջականորեն, ուղղակի տեղի կ'ունենայ գործողութիւնը:</p> <p>-Անուղղակի կը կոչուի այն խնդիրը, որ անուղղակի կապուած է գործողութեան՝ ստորոգիչին:</p>
------------------------	--